

351.74

7-50

01 MAR 2010 168

ՀԱՅ ԶԻՆՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱԳԱՐԱՆ

351.74
7.60

74
50
W

№ 2

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ
Публичная Библиотека
7/21-1922
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՀԱՏԱՆ
Январь, Мясницкая

1574- ՊԻ

Է. ՊԻՄԵՆՈՎԱ

ՄՇՏԱԿԱՆ ԶՕՐՔ

=== ԵՒ ===

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱ

Ռուսերէնից փոխադրեց

ՌՈՒՏՕՆ

=====

Ք Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԱՇԽԱՏԱՒՈՐ» Գործվ. 39.

1918

1939
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Է. Պ Ի Մ Ե Ն Ո Վ Ա

ՄՇՏԱԿԱՆ ԶՕՐԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱ

Ամեն մի պետութիւն և երկիր պաշտպանութեան կարիք ունի, որպէսզի ժողովուրդը կարողանայ պարապել իր գործերով: Այդպիսի պաշտպանութեան կարիք զգացւում էր մանաւանդ հին ժամանակներում, երբ որեւէ երկրի խաղաղ բնակիչներն իրենց աւելի ուղիւս հարեալների յարձակման էին ենթարկւում և կողոպուում:

Մինչև անգամ եղել է ժամանակ, երբ այդ յարձակումները քաջութիւն են համարւել, և կողոպուողները տուն դառնալով՝ ամբողջ բնակչութեան կողմից ընդունւել են որպէս քաջեր, իսկ նրանց քաջագործութիւնները ժողովրդի երգերի նիւթ են դառել: Սաղաղ բնակիչները, հողագործները, շարունակ վախենալով իրենց կեանքի և ստացւածքի համար, պէտք է որ վերջապէս մտածէին իրենց պաշտպանութեան մասին, այդ պատճառով կազմեցին պահակախումբ:

Նրանք հրաւիրեցին կամաւորներ, զինեցին նւթանց և իրենց կալածները յանձնեցին նրանց պահպանութեան. բացի դրանից պահակները պէտք է թշնամու յարձակումների առաջն առնէին և այդ բոլորի տեղ կերակուր և հագուստ ստանային կալածատէրերից: Այդ էլ եղաւ առաջին զօրքը, որ պիտի խաղաղ բնակչութեան պաշտպանը լինէր:

Հին ժամանակ Ռուսաստանում այդպիսի զօրք կազմում էր իշխանական պահակախումբը, բայց նա ծառայում էր ոչ միայն պաշտպանութեան, այլ և յարձակման և իշխանների գլարճութիւնների համար: Իշխանները կազմակերպեցին էին անում պահակախումբին, թէև իրենք չէին նրա պահողը, այլ՝ ժողովուրդը, որովհետև այդ նպատակի համար ժողովրդից տուրք էին առնում: Չնայած դրան, իշխանները պահակախումբը համարում էին իրենց սեփական զօրքը և երբ ուզում էին, կուրի էին տանում: Եթէ թշնամին ուժեղ էր լինում, և մի պահակախումբը չէր կարող զիմադրել նրան, այն ժամանակ ժողովրդի կամքը հարցնում էին և նրանից զօրք հաւաքում. մանաւանդ եթէ ժողովուրդը սիրում էր իր իշխանին, զօրք հաւաքելը շատ հեշտ էր կատարւում. ժողովուրդը լսում էր իշխանի կոչը և հետևում էր նրան. բայց եթէ իշխանն իր ժողովրդի սէրը չէր վայելում, այն դէպքում չէր յաջողւում հարկաւոր չափով զօրք հաւաքել: Պահակախումբի մէջ մտնելը և նրանից հեռանալը ամեն մէկի կամքին էր թողնւած. զօրով չէին ստիպում ոչ մէկին մնալ նրա մէջ: Պահակախումբի զինւորները պայման էին կապում իշխանի հետ, որը նրանց առատ պարգևներ էր տալիս, կողոպուտից նրանց բաժին էր հանում և այսպէս աշխատում էր զինւորներին կապել իր հետ. այդ էր պատճառը, որ իշխանի և պահակախումբի զինւորների մէջ սերտ կապ կար: Պայմանը երկու կողմի համար էլ ձեռնադր էր լինում, բայց պարտաւորեցուցիչ չէր ոչ մի կողմի համար: Բացի պահակախումբից, որը գլխաւորապէս իշխանական զօրքն էր կազմում, և երկրապահ զօրքից, որը կոչւում էր անհրաժեշտութեան դէպքում,

Ռուսաստանում հին ժամանակ կային և վարձու զօրքեր, որոնք Ռուսաստանում ապրող զանազան ցեղերից էին կազմվում: Այդ բոլոր զօրքերի գլխավոր անելիքն այն պիտի լինէր, որ խաղաղ բնակիչներին պաշտպանէին զբոսի թշնամիների յարձակումներից, բայց կամաց-կամաց նպատակը փոխեց, և իշխաններն սկսեցին զօրքերը ծառայեցնել իրենց անձնական նպատակների համար, իսկ աւելի յաճախ՝ իրենց սեփական հզորութիւնը հաստատելու համար:

Իշխաններից քիչ թէ շատ փառասէրները պատերազմական համբաւ ձեռք բերելու նպատակով արշաւանքներ էին կազմակերպում, ուրիշները հրապուրւում էին առատ աւարով (թալան) և իրենց պահակախմբով կամ վարձու զօրքերով յարձակումներ ու պատերազմներ էին սկսում: Այսպիսով իշխանները կամաց-կամաց սկսեցին զօրքը համարել ոչ թէ ժողովրդի սեփականութիւն, այլ իրենց սեփականութիւն, որի հետ կարող են վարել իրենց ուղածի պէս: Այս համոզումը աւելի և աւելի հաստատւում է, և իշխաններն իրենց զօրքերից պահանջում են անպայման հնազանդութիւն, իսկ անհնազանդներին խիստ պատժում են: Այսինչ ժողովուրդը զօրքի վրայ շարունակում էր նայել իբրև իր պաշտպանի վրայ և սիրով փող էր տալիս նրա պահպանութեան համար:

Ի հարկէ, զօրքը ժողովրդի բարեկամն ու հայրենիքի պաշտպանը պէտք է լինէր: Բայց համարեա բոլոր պետութիւնների մէջ, որտեղ հետզհետէ մշտական զօրք է կազմւում, կառավարիչները, իշխանները և թագաւորները վարւում էին նրա հետ իրենց ուղածի պէս և օգտւում էին նրանից իրենց անձնական

նպատակների համար: Զօրքն էլ կամաց-կամաց մոռանում էր ժողովրդին ծառայելու իր նախկին կոչումը և սկսում էր ծառայել կառավարիչներին, որով նա դադարում էր ժողովրդական լինելուց: Զինւորական ծառայութեան կանչած նորակոչ զինւորին ոչ միայն սովորեցնում էին զէնք բանեցնել, այլ և ներշնչում էին անպայման հնազանդել իշխանութեան ամեն մի հրամանին. նրան կապում էին երգումով, արը նրան հարկադրում էր զրկել իր սեփական կամքից և անպայման հնազանդութիւն ցոյց տալ: Հէնց այն ըոպէից, երբ նա հագնում էր զինւորի շոր, նրա կապը այն ժողովրդի հետ, որից նա դուրս է եկել, կտրւում էր, և այն ամենը, ինչ որ մօտ էր իր ժողովրդի սրտին, նրա համար խորթ էր դառնում: Եւ այդ խորթացումը հասնում էր նոյնիսկ այն աստիճանին, որ զինւորը, առանց հաշի առնելու, անպատճառ կատարում էր ամեն հրաման, թէկուզ այդ հրամանն իր մերձաւոր բարեկամի կորստեան պատճառը դառնար: Հէնց այդ էլ հարկաւոր էր իշխողներին:

Իր և ժողովրդի մէջ եղած կապը մոռացած զինւորներից կազմած զօրքը չէր էլ կարող այդ ժողովրդի իսկական պաշտպան լինել. նա միայն իշխողների պաշտպանն էր: Լինում էին զէպքեր, և այն շատ անգամ, երբ ժողովրդի և նրա վարիչների, իշխանների, թագաւորների և ուրիշների ցանկութիւններն իրարից տարբեր էին լինում: Բայց եթէ թագաւորը ցանկանում էր պատերազմել ինչ-ինչ նպատակներով, նա կարող էր և հաշի չառնել իր հրապատակների ցանկութիւնները: Նա զօրք ունէր և այդ զօրքին երգումով պարտաւորեցնում էր հը-

հազանգուել իրեն, և թէև զօրքը միշտ էլ պահուում էր ժողովրդի կողէկներով, բայց հա ծառայում էր ոչ ժողովրդին այլ թագաւորին, որը կարող էր նրան պատերազմի տանել երբ էլ ուզէնար, նոյնիսկ հա-կառակ ժողովրդի ցանկութեան և կամքի:

Մշտական և մեծաքանակ զօրք ունենալու հա-րաւորութիւնը երկրի կառավարիչներին զրգում էր ձգտել պատերազմական փառքի և համաշխարհային հզօրութեան, նրանք նպաստում էին ղինւորական գերիշխանութիւն հաստատելու թէ խաղաղ, թէ պա-տերազմի ժամանակ:

Մեծ բանակ պահելու համար ահագին ծախքեր են հարկաւոր, բայց ծախքեր հոգացողը ոչ նրանք են, ովքեր միլիտարիզմի պաշտպան են հանդիսանում, և ոչ էլ վարիչները, այլ ժողովուրդը, որ տուրք է վճարում և թափում է իր արիւնը: Ահա թէ ինչու դեմոկրատիայի զարգացումը թշնամի է միլիտարիզ-մին, որը յաճախ արհեստական եղանակով առաջ է բերում և բազմացնում այն մարդկանց թիւը, որոնք պատերազմից շահ ունին և ձգտում են նրան:

Իսկ երբ ժողովուրդը տրտնջում էր, անբաւակա-նութիւն էր յայտնում իր կառավարիչներից և յուզ-ւում ու համարձակւում էր արտայայտել իր դժգոհու-թիւնը, ապա այդ նոյն զօրքը իր ղեկավարների հը-րամանով գնում էր ճնշելու անբաւականներին և մի-անգամայն մոռանալով այն մասին, որ իր առաջ գտնւում են հարազատ եղբայրները, կրակում էր նրանց վրայ, ինչպէս թշնամիների վրայ:

Ահա թէ ինչու զօրքը դադարեց ժողովրդի բա-րեկամը և պաշտպանը լինելուց:

Բայց արդեօք ամեն տեղ այդպէս է ե-

ղել. այո, ամեն տեղ, ամեն երկրում ամեն տէ-րութեան մէջ, որտեղ զօրքը մոռանալով իր գըր-խաւոր և անմիջական կոչումը՝ ծառայելու ժո-ղովրդին, պաշտպանելու նրան, ծառայում էր միայն իր վարիչներին, նրանց նպատակներին ու շահերին անպայման կատարում էր նրանց հրամանները ա-ռանց հաշիւ տալու, լսել են, թէ վատ նրանք: Ամեն տեղ, որտեղ զօրքը իր վարիչներին թէ ու թիկունք է եղել, ժողովուրդը երկար ժամանակ և ծանրապէս տանջւել է և միայն տանջալից ու արիւնահեղ կուից յետոյ նրան յաջողւել է մի քանի երկրներում հաս-նել ազատութեան և հարկադրել վարիչներին լսել ի-րան և հակառակ չգնալ իր կամքին: Այսպէս է եղել իտալացիների, Ֆրանսիացիների, գերմանացիների և ուրիշ ազգերի մէջ: Թագաւորներն իրենց տրամա-դրութեան տակ հազանգ զօրք ունենալով՝ չէին վա-խենում ոչ ժողովրդի զայրոյթից և ոչ էլ նրա ան-բաւականութիւնից, ժողովրդի ամեն մի պահանջի դիմաց նրանք գնդակ ու սւիճն ունէին պատրաստ. և ժողովուրդը շատ արիւն է թափել, մինչև վերացրել է այդ սարսափելի ոյժը:

Անգլիացիները չունին և չեն ունեցել մշտական զօրք, այդ պատճառով շատ վաղուց արդէն նրանք վայելում են այն բոլոր քաղաքական ազատութիւն-ները, որ ռուս ժողովուրդը նոր է միայն ձեռք բերել, ցարական իշխանութիւնը կործանելով:

Երբ անգլիացիները ցանկացան ազատութիւն և այս մասին յայտնեցին իրենց թագաւորին, վերջինս իր տրամադրութեան տակ չունենալով հազանգ զօրք, որ հարկադրի լսել ժողովրդին, ստիպւած ե-ղաւ ընդունել իր հպատակների պահանջը: Եւ թէև

անգլիական թագաւորները շատ անգամ փորձել են խել իրենց հպատակներից այն, ինչ որ տւել են, բայց այդ նրանց չի յաջողւել:

Այսպէս, ուրեմն, այն զօրքը, որ պէտք է ժողովրդի բարեկամ լինի, կարող է նրա թշնամին դառնալ, եթէ մոռացութեան տալ այն, որ պէտք է ծառայի ժողովրդին, որի աշխատանքով ինքն է պահուում: Ժողովուրդն ու հայրենիքը արտաքին թշնամիներից պաշտպանելով ի հարկէ, զօրքը ժողովրդի բարեկամը կը լինի: Այնտեղ, ուր զօրքի և ժողովրդի մէջ սերտ կապ կայ, և զօրքը ծառայում է ժողովրդին, զօրքը կարող է ժողովրդական կոչւել: Բոլոր տէրութիւնները մշտական զօրք պահելու համար անհազին փողեր են ծախսում: Բացի Անգլիայից և Ամերիկայի Միացեալ Նահանգներից, ամեն տեղ զոյսութիւն ունի զինւորական պարտադիր ծառայութիւն: Անգլիայում զօրքը վարձ է ստանում. այնտեղ ամեն մարդ կարող է զինւոր դառնալ, դրա համար չեն հարկադրում: Անգլիական կառավարութիւնը ոչ իրաւունք ունի ստիպելու, որ մարդիկ զինւորագրւեն, և ոչ էլ կարող է զօրքն իր ուզածի պէս ծառայեցնել հակառակ ժողովրդի կամքի:

Անգլիական պառլամենտը կամ ժողովրդական ներկայացուցիչների, այսինքն՝ ժողովրդից ընտրւած մարդկանց ժողովն ամեն տարի որոշում է մշտական զօրքի կազմը:

Եթէ պառլամենտը զօրքի կազմին չհաւանի, այն ժամանակ զօրքն անմիջապէս պիտի արձակւի և նրա տեղ կազմւի այնպիսի զօրք, որն ամբողջապէս կախւած է պառլամենտի, ուրեմն և ժողովրդի կամքից: Որովհետեւ Անգլիայում մշտական զօրք քիչ կայ,

եղածն էլ կենդրոնացած է գլխաւորապէս մի բանի մեծ քաղաքներում, այդ պատճառով զինւորական հագուստը շատ քիչ է աչքի ընկնում անգլիական քաղաքներում:

Պէտք է նկատել և այն, որ անգլիական զինւորներն իրենց հետ զէնք կրելու իրաւունք չունին, բացի այն դէպքից, երբ նրանք իրենց պարտաւորութիւնն են կատարում: Օրինակ՝ զբօսանքի գնալիս զինւորն իրաւունք չունի իր հետ հրացան կամ սուր վերցնել, իսկ սպաները և զեներալները միայն ծառայութեան ժամանակ են զինւորական շոր հագնում, իսկ սովորական ժամանակը հագնւում են հասարակ քաղաքացու պէս:

Այսպէս ուրեմն, Անգլիայում չկայ զինւորական պարտադիր ծառայութիւն. ով ցանկանում է իբրեւ զինւոր ծառայել, ներկայանում է կենդրոնական կամ տեղական զինւորական ատեան և զինւորագրւում. նոյն իսկ կարող է այդ բանն անել պոստի միջոցով, որի բաժանմունքներն Անգլիայի բոլոր գիւղերում կան: Զօրքի մէջ մտնել ցանկացողը պոստային գրասենեակում ձեռք է բերում յատկապէս խնդրագրի համար պատրաստած թուղթ և նշանակում է նրա մէջ այն զօրամասը, որտեղ ինքը ցանկանում է ծառայել, այսինքն նշանակում է՝ արդեօք ուզում է հետեակ զինւոր դառնալ, թէ նաւատորմում, հեծելազօրքում կամ հրետանիում (արտիլլերիա) ծառայել:

Խնդիրը պոստով ուղարկւում է զինւորական ատեան, որտեղից և պատասխան է ստանում, թէ երբ պէտք է ներկայանայ քննութեան: Եթէ զինւորների կարիք կայ, և խնդիր աւողը բաւարարում է եղած պահանջներին, նրան ընդունում են զօրքի մէջ, հա-

կառակ զէպքում մերժում են: Ճիշտ է, նախկին ժամանակներն Անգլիայում զանազան խորամանկութիւններ էին բանեցնում. մարդկանց զինւորական ծառայութեան գրաւելու համար խմեցնում էին և խաբելով համաձայնութիւն էին ստանում զինւոր գրեթէ աշխատ ալիս աշխատի միջոցների չեն դիմում, որովհետեւ անգլիական դատարանը խիստ պատժում է այդպիսի խաբէութեան համար: Ասենք՝ դրա կարիքն այժմ չի էլ զգացւում: Միշտ էլ գտնւում են մարդիկ, որոնց կամ կարիքն է ստիպում զօրքի մէջ մտնել և կամ զէպի զինւորական ծառայութիւնն ունեցած սէրը: Նոյն իսկ նա, ով մտել է զինւորական ծառայութեան, առաջին ժամանակներում իրեն կապւած չի համարում զօրագնդի հետ և երեք ամսւայ ընթացքում կարող է հեռանալ ծառայութիւնից. եթէ այլևս չի ուզում ծառայել, այս զէպքում նա պէտք է փրկանք վճարի մօտաւորապէս 100 ուլլի: Երեք ամսից յետոյ, եթէ զինւորը որոշել է ծառայել, պէտք է գնդի մէջ մնայ 5—7 տարի, իսկ այնուհետեւ մօտ 5 տարի էլ համարւում է պահեստի զինւոր: Ծառայութեան ընթացքում, բացի այն, որ նա կերակրւում ու հագնւում է պետութեան հաշւով, նաև ստանում է օրական մօտ 50 կոպէկ, իսկ ծառայութիւնից հեռանալիս իւրաքանչիւր ծառայած տարւայ համար իբրեւ լրացուցիչ նպաստ 50 ուլլ:

Եթէ զինւորը ծառայութեան ընթացքում կողմնակի աշխատանքներ էլ է ունենում, օրինակ՝ աշխատում է արհեստանոցներում կամ ծառայում է սպայի մօտ, այն զէպքում այդ աշխատանքների համար առանում է յաւելեալ վճար: Զինւորներն Անգլիայում համեմատաբար լաւ են ապրում. նրանք լաւ կերակրւում ու

ազնւում են, ունին ընդարձակ բնակարան և ուժիկ են ստանում: Չնայելով այս ամենին՝ անգլիացիները սիրով չեն զինւորագրւում և բանւորները միայն այն ժամանակ են զինւորական ծառայութեան գնում, երբ մեծ կարիքի մէջ են ընկնում: Բացի մշտական զօրքից, Անգլիայում կայ նաև լրացուցիչ զօրք, որ կազմւում է կամաւորներից և միլիցիայից: Միլիցիա է կոչւում այն զօրքը, որ կազմւում է միայն պատերազմական ժամանակի համար. երկրապահների մի տեսակն է: Խաղաղ ժամանակ ծառայութեան մէջ մնում են միլիցիայի փոքրիկ գնդեր, այդիսի բանակը կոչւում է միլիցիական, նման զօրք կայ և Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Անգլիայում այն մարդիկ, ովքեր միլիցիայի մէջ են մտնում, պարտաւորւում են ծառայել վեց տարի, այսինքն երկու տարի ծառայում են, իսկ չորս տարի պահեստի զինւորներ են համարւում: Միլիցիան նոյնպէս լրացւում է վարձկան զինւորներով: Կամաւորները կանչւում են միայն այն ժամանակ, երբ Անգլիան կուելու կարիք է ունենում: Նրանք ծառայութեան են մտնում վաշտապետի հետ համաձայնութեան գալով և կարող են հեռանալ, բայց պարտաւոր են երկու շաբաթ առաջ յայտնել այդ մասին վաշտապետին: Կամաւոր զօրքը շատ անգամ է մեծ ծառայութիւններ մատուցել Անգլիային: Մարդիկ, որ ազատ են և իրենց կամքով են գնում հայրենիքը պաշտպանելու, ի հարկ է, աւելի մեծ օգուտ կրբերեն հայրենիքին, մանաւանդ եթէ լաւ վարժւած են և հմուտ կառավարիչներ ունին: Անգլիական կամաւորները մեծապէս նպաստել են զօրքի կազմակերպման և զինման գործը հետզհետէ բարելաւելուն, ու

ըովհետև նրանք առանց քաշելու նկատած բոլոր պակասութիւններն ասում էին, իսկ ժողովուրդն այդ իմանալով պահանջում էր որ այդ պակասութիւններին առաջն անմիջապէս առնեն։ Ներկայ համաշխարհային պատերազմը փոխեց անգլիական գեղեցիկ կարգերը։ Անգլիան, որ նորանոր երկրներ նւաճելու, իր տիրապետութիւնն ընդարձակելու և համաշխարհային առևտրի մէջ գերակշիռ տեղ ունենալու բուն ձգտումն ունի, մտքեց, թէ և ժամանակաւոր, պարտադիր զինւորական ծառայութիւն, ճիշտ այնպէս, ինչպէս ուրիշ երկրներում, որտեղ կայ մեծ թւով մշտական զօրք։ Սակայն պէտք է յուսալ, որ անգլիական ազատասէր աշխատաւոր դասակարգը թոյլ չի տալ, որ այդ ժամանակաւոր երևոյթը փոխի մշտականի։ Ամերիկական զօրքն ամբողջապէս կամաւորներից է կազմած, բայց և այնպէս ամերիկացիները հպարտութեամբ իրենց փոքրաթիւ զօրքը համեմատում են երոպական տէրութիւնների մեծաթիւ զօրքերի հետ։ Զօրքի շատութեան տեսակէտից Ամերիկայի Միացեալ Նահանգները վերջին տեղն են բռնում, բայց իրենց հարստութեամբ և պետութեան համար կատարած արդիւնաւէտ գործերի շատութեամբ անցել են բոլորից։ Շնորհիւ այն հանգամանքի, որ նոր մշտական զօրք չունին, այլ ունին միայն միլիցիա, զինւորական ծառայութիւնը նրանցից չի խլում ամենաթարմ հասակում աշխատաւորներին, ինչպէս այդ կատարւած է ուրիշ երկրներում։ Այս հանգամանքն ամերիկացիներին հնարաւորութիւն է տալիս լարել բոլոր ուժերը օգտակար աշխատանքի, առևտրի, արդիւնաբերութեան, երկրագործութեան և ուրիշ կարևոր աշխատանքների համար։ Իսկ ժողովրդի

հարստութիւնը մեծացնելով և բարեկեցութեանը զարկ տալով՝ հնարաւոր է լինում փոխառութիւն և պարտք չանել։

«Մենք թւական մեծութեամբ յետինն ենք, բայց մեր արդիւնաւէտ, օգտակար աշխատանքով և հարստութեամբ առաջինը», հպարտութեամբ ասում են ամերիկացիները։ Բայց ամեն մի ամերիկացի իրեն պարտաւոր է զգում զէնք առնել և պաշտպանել հայրենիքը, վտանգի դէպքում։

Դրա համար ամեն մի ամերիկացու փոքր հասկից զինավարժութիւն են սովորեցնում։ Դպրոցներում տղաները կազմում են իսկականի նման զօրամասեր, հրաւիրում են զինւորական գործին ծանօթ մէկին ղեկավարելու։ Տարուայ ընթացքում շաբաթական երկու ժամ այսպէս վարժւում են, ապա գնում են ամառը որևէ բանակ, եթէ հնարաւոր է ծովի ափ, որտեղ և հրացանաձգութեան մէջ վարժւում և լողալ են սովորում։ Միացեալ Նահանգներում զէնք կրելը կամ վաճառելն օրէնքով չի տրգելւում, ընդհակառակն, աւելի շատ խրախուսւում է։ Նրանց օրէնքներում կայ այսպիսի մի կէտ. «Որովհետև կանոնաւոր կազմակերպւած միլիցիան ազատ պետութեան ապահովութեան գրաւականն է, ապա օրէնքով չպէտք է արգելի ժողովրդին զէնք ունենալու, կրելու իրաւունքը»։ Զինւորական ծառայութեան պիտանի բոլոր քաղաքացիները 18-ից մինչև 45 տարեկան հասակը համարւում են միլիցիայի կազմի մէջ։

Միլիցիական ծառայութիւնից ազատւում են պետական ծառայութեան մէջ գտնուողները, երկաթուղու ծառայողները, այլև այն մարդիկ, որոնց կրօնական համոզումները թոյլ չեն տալիս պատերազմել և ծա-

ուայել պատերազմի հետ կապ ունեցող հաստատու-
թիւնների մէջ: Միլիցիան բաժանուում է երկու տե-
սակի՝ կազմակերպւած և անկազմակերպ. առաջին
տեսակի մէջ են այն մարդիկ, որոնք իրենց կամքով
յօժարում են ծառայել հինգ տարի. նրանք պարտա-
ւոր են տարւայ մէջ 24 անգամ հաւաք-
ւել վարժութիւնների, բացի դրանից 5 օր էլ պիտի
անցկացնեն բանակում (лагерь): Ամերիկական մի-
լիցիայի զինւորներն իրենք են ընտրում իրենց սպա-
ներին մինչև կապիտանի աստիճանը, իսկ աւելի աւագ-
ներին ընտրում են սպաները: Միլիցիոններները կազ-
մում են բանակի պահեստի ոյժը և ուճիկ են ստա-
նում միայն այն ժամանակ, երբ մասնակցում են պա-
տերազմին. իսկ մշտական փոքրաթիւ զօրքը (30.000),
որ ցրւած է Միացեալ Նահանգների ամբողջ տարա-
բաժութեան վրայ, կազմւած է բացառապէս վարձ-
կան կամաւոր զինւորներից, որոնցից իւրաքանչիւրը
բոլոր յարմարութիւնների հետ ստանում է նաև ամ-
սական 30 ու. ուճիկ: Ամերիկական զինւորը լաւ կե-
րակրւում է, ունի լաւ կացարան և երբէք ոչ մի
ծանրութիւն չի կրում իր վրայ:

Զինւորական ծառայութեան մէջ լինելով զին-
ւորն իրեն վերապահում է դարձեալ ազատ քաղաքու-
ցու իրաւունքներ և երբէք ստրկական հնազանդու-
թիւն չի ցոյց տալիս իր իշխանաւորներին, թէ և ոչ
մի իշխանաւորի մտքով անգամ չի անցնիլ այդ-
պիսի պահանջ անել զինւորից: Այս հանգամանքն ամե-
նեկն չի խանգարում ամերիկական զինւորին անձնագո-
հութեամբ, քաջութեամբ կռւել իր հայրենիքի պաշտպա-
նութեան համար, երբ այդ հարկաւոր է և դեռ ոչ մի
ժամանակ և ոչ մի պատերազմի մէջ ամերիկացիներն
իրենց չեն խայտառակել: Ամերիկական զինւորը շատ
կը զարմանար, եթէ նրան ասէին, որ չպիտի դատի, այլ
պիտի նազանդւի և կատարի, ինչ էլ որ հրամայեն:
Ընդհակառակն, ինչպէս զօրքի շարքում, նոյնպէս և
շարքից դուրս, նա մնում է կենդանի մարդ, և ոչ

անլեզու ու անհոգի մեքենայ. կռիւ գնալիս նա գի-
տէ, թէ ինչի՞ համար է կռւելու:

Հայրենիքը պաշտպանելով ամերիկական զինւորը
պաշտպանում է իր իսկ ազատութիւնը, իր իսկ բա-
րեկեցութիւնը, իր իրաւունքը, որով նա հպարտու-
թեամբ կարող է մեծ երկրի, ազատ Ամերիկայի քա-
ղաքացի կոչւել: Նա գիտակցութեամբ և կամովին
պատերազմ է գնում, երբ այդ նրա կարծիքով ան-
հրաժեշտ է իր երկրի բարօրութեան, պատուի և շահի
համար, բայց նրան չի կարելի հարկադրել պաշտպա-
նել մի այնպիսի գործ, որը նրա խղճին դէմ է. ոչ
մի երդումով նրա ազատութիւնը չեն կաշկանդում և
չեն հարկադրում անել այն, ինչ որ նրա կարծիքով
փաստակար է հայրենիքի համար և իր արժանապատ-
ւութիւնը, իբրև ամերիկեան քաղաքացու և թէ ընդ-
հանրապէս իբրև մարդու, վիրաւորող:

Միլիցիոնները երբ ծառայութեան է կանչւում,
երբէք չի հեռացւում իր հարազատ վայրից և ուժորա-
բար ծառայում է իր երկրացիների հետ
իր բնակութեան շրջանում. հասկանալի է, որ խօսքը
վերաբերում է խաղաղ ժամանակին. այլ է պատե-
րազմի ժամանակ: Միլիցիոնները գիտէ, որ իր պարտքն
է հայրենիքը արտաքին թշնամիներից պաշտպանել,
աւստի նա գնում է այնտեղ, որտեղից թշնամու յար-
ձակումն է լինելու: Բայց եթէ իշխանութիւնը մտա-
գրւէր միլիցիան ոտքի կանգնեցնել այսպէս կոչւած
ներքին թշնամիների դէմ, ինչպէս անւանում է նրանց,
ովքեր դժգոհ են տիրող կարգերից և շահագործու-
թիւններից, այն ժամանակ հազիւ թէ նա կարողա-
նար հարկադրել, որ եղբայր եղբօր վրայ գնայ: Այդ
լաւ է հասկանում իշխանութիւնը և այդ պատճառով
մի տեղի դժգոհներին ճնշելու համար նա միշտ ուրիշ
տեղից է զօրք բերում: Մեզ մօտ՝ Ռուսաստանում
ցարի կառավարութեան օրով նոյնիսկ կանոն էր, որ
զինւորը երբէք չպէտք է իր հարազատ վայրերում,
իր ծննդավայրում, իր բարեկամների մէջ ծառայէր:

Այսպիսով նա կտրուում էր իր հարազատ բնից
և յաճախ մոռանում, որ ինքն էլ դուրս է եկել այն
ժողովրդի ծոցից, որի դէմ, իբրև թշնամու դէմ, եր-
բեմն սուր է բարձրացնում:

Այսպէս ուրեմն, զօրքը պիտի լինի ժողովրդա-
կան: Նա պէտք է ծառայի ոչ թէ կառավարողներին,
այլ՝ ժողովրդին, որ իր աշխատանքով նրան պահում
է: Միայն այն ժամանակ նա պատուով կը կատարի իր
վրայ դրած պարտականութիւնները և պաշտպան
կլինի աշխատաւոր ժողովրդին ու հայրենիքին: Այնպեղ
ուր ժողովրդի և զօրքի մէջ կապը երբեք չի կտրուում,
որտեղ ամեն զինուոր յիշում է, որ ինքը քաղաքացի
է, որ ինքն առաջ գիւղացի և բանուոր է եղել և էլի
պիտի դառնայ, միայն այնտեղ է զօրքը ժողովրդի
խսկական բարեկամն ու հայրենիքի պաշտպանը: Այդ-
պիսի իսկապէս ժողովրդական զօրք, որ ծառայում
է միայն իր հայրենիքի և ժողովրդի պաշտպանու-
թեան և ոչ իր կառավարողների նաճողական ձեռ-
տումներին, կարող է լինել միայն այնպիսի միլի-
ցիան, որպիսին կայ Ամերիկայի Միացեալ Նահանգ-
ներում: Այս արդէն վաղուց գիտէ աշխատաւոր ժո-
ղովուրդը: Այդ է պատճառը, որ մայիսի 1-ի տօնին,
որ միայնում է բոլոր երկրների աշխատաւոր ժողո-
վուրդներին, պահանջում է, որ մշտական զօրքին
փոխարինի իսկական ժողովրդական զօրքը՝ միլիցիան,
քանի որ մշտական զօրքը մի ծանր բեռ է ժողո-
վրդի վրին և մշտական սպառնալիք ստեղծում,
մինչդեռ միլիցիան իր շահամոլ
վարիչների ձեռքին երբեք
չի դառնալ, ինչպէս մշտական



ՀՀ Ազգային գրադարան



NL0219562

39. 424